# ՄԱՐԶԱԿԱՆ

# «Առաջիկայում հավաքականի առջեւ կարելի է ավելի լուրջ խնդիր դնել»

## *Հարցազրույց ՀՀ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանի հետ*

***Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի ավարտական տուրում վաղը Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում կհյուրընկալի Նորվեգիայի ընտրանուն: Ստացվել է այնպես, որ այդ հանդիպումը հայ ֆուտբոլիստների համար, որոնք դեռեւս չեն ճաշակել հաղթանակի քաղցրությունը, ընտրական մրցափուլում ամենավճռորոշն է: Հաղթանակի դեպքում մեր հավաքականը կարող է ընտրական մրցաշարն ավարտել 4-րդ տեղում, ինչը, համաձայնեք, վատ արդյունք չէ: Պատասխանատու այդ խաղից առաջ «Դվին» հյուրանոցում, որտեղ հավաքականն անցկացնում է իր ուսումնամարզական հավաքը, հանդիպեցի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանին: Թիմը նոր էր վերադարձել Աբովյանում անցկացրած առաջին պարապմունքից եւ, բնականաբար, մարզիչն էլ տղաների հետ մեկտեղ հոգնած էր, սակայն սիրահոժար համաձայնեց պատասխանել հարցերին:***

**– Պրն Սուքիասյան, ինչպե՞ս է ընթանում ուսումնամարզական հավաքը, ի՞նչ հիմնախնդիրներ են ձեզ մտահոգում:**

– Նորվեգիայի հավաքականի հետ մրցախաղի նախապատրաստությունը սկսել ենք սեպտեմբերի 30-ից: Օրական երկու պարապմունք ենք անցկացնում. մեկը՝ Աբովյանում, մյուսը՝ «Հանրապետական» մարզադաշտում: Ամեն ինչ նորմալ հունով է ընթանում, ըստ նախապես մշակված ծրագրի, պարզապես որոշ բարդություններ ծագեցին մի քանի լեգեոներների Երեւան ժամանելու առնչությամբ: Այսպես, Ռոման Բերեզովսկին ու Ալբերտ Սարգսյանը պետք է ժամանեին հոկտեմբերի 2-ին, սակայն ինքնաթիռի չվերթի հետաձգման պատճառով մեկ օր ուշացումով ներկայացան հավաքի: Ռոմիկ Խաչատրյանը Կիպրոսից Երեւան պիտի ժամաներ ուղիղ չվերթով, սակայն չվերթը հանել էին, եւ նա ստիպված էր գալ Մոսկվայով՝ հաջորդ օրը:

Հիմնական մտահոգությունը խաղացողների վնասվածքներն են: Ցավոք, վնասվածքի հետեւանքով այդպես էլ Երեւան չժամանեց Անդրեյ Մովսիսյանը, Երվանդ Սուքիասյանի ոտքի ոսկորը ճաքել է եւ նա էլ խաղին չի մասնակցի: Մենք հավաքի էինք հրավիրել նաեւ ԲՄԱ Ռոստովի հարձակվող Միքայել Մարգարովին, սակայն թիմի ղեկավարությունը պատճառաբանելով, որ նա բանակային է, չէր թույլատրել Մարգարովին ժամանել Երեւան:

**– Ինչպիսի՞ն է տղաների ընդհանուր ֆունկցիոնալ պատրաստականությունը:**

– Բնական է, որ հայաստանյան թիմերում հանդես եկող ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստականությունը չի կարող գոհացնել հավաքականի մարզիչներին: Ուստի հավաքի առաջին օրերին բավական մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատեցինք, հագեցած մարզումներ անցկացրինք, ինչը թույլ տվեց բարելավել տղաների ֆիզիկական վիճակը: Մինչեւ խաղի օրը ծանրաբեռնվածությունն աստիճանաբար թուլացնում ենք, եւ, կարծում եմ, խաղին տղաները կներկայանան կազմ ու պատրաստ:

**– Համաձայնեք, որ նորվեգացիների հետ հանդիպումը թերեւս ամենավճռորոշն է ընտրական մրցաշարում: Ի՞նչ ակնկալիքներ ունեք առաջիկա խաղից:**

– Բոլորս էլ լավ հասկանում ենք խաղի նշանակությունը եւ ձգտելու ենք հաղթանակի, մանավանդ որ առայժմ մեզ չի հաջողվել ճաշակել հաղթանակի բերկրանքը: Ճիշտ է, նորվեգացիները, որոնք հաղթողի գլխավոր հավակնորդ էին համարվում, չարդարացրին սպասելիքները, սակայն ամեն դեպքում ուժեղ մրցակից են համարվում, որին հաղթելը շատ դժվար է: Վստահ եմ, որ տղաները կներդնեն բոլոր ուժերը հաջողության հասնելու համար: Իսկ թե որքանով դա մեզ կհաջողվի, ցույց կտա հանդիպումը:

**– Անդրեյ Մովսիսյանի բացակայությունը երեւի թե որոշակի դժվարությունների առա՞ջ է կանգնեցրել ձեզ հարձակման գիծը կազմավորելիս:**

– Այս ուղղությամբ մենք մտածել ենք եւ ունենք մշակված տարբերակ:



**– Առաջիկա խաղի կարեւորությունը լրացուցիչ հոգեբանական բեռ չի՞ հանդիսանա տղաների համար:**

– Թե տղաների, թե իմ մոտ նման մտավախություն չկա: Նախ որպես մասնագետ եւ երկրորդ կամային հատկանիշներով օժտված անձնավորություն, իմ աշխատած 2 տարիների ընթացքում հավաքականի խաղում որոշակի առաջընթաց, կարծում եմ, ապահովել եմ: Հավաքականի կազմում սերնդափոխություն է ընթացել, նշմարվում է խաղային ձեռագիրը, ֆուտբոլիստները գոլեր են խփում, թիմը հարձակողական ֆուտբոլ է ցուցադրում: Հավաքականի հնաբնակների կողքին նոր անուններ են հայտնվել: Օրինակ, Արկադի Դոխոյանը, որն իրեն գերազանց դրսեւորեց 20-30 մլն արժեցող Գիգսի հետ մրցապայքարում, չեզոքացնելով նրան: Քարամյան եւ Հակոբյան եղբայրները, Արտակ Մինասյանը, Աղվան Մկրտչյանը մոտ ապագայում հավաքականի հիմնական կորիզը կկազմեն: Եթե դրսից տաղանդավոր ֆուտբոլիստների չենք կարողանալու հրավիրել, ապա ավելի լավ է հենվենք տեղի երիտասարդ ֆուտբոլիստների վրա: Ունենալով եւս մի քանի լավ ֆուտբոլիստներ, կարելի է ասել, որ հավաքականը կայացել է եւ արդեն ընտրական հաջորդ մրցափուլում՝ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում ազգային հավաքականի առջեւ կարելի է ավելի լուրջ խնդիր դնել:

**– Օբյեկտիվորեն գնահատելով մեր հավաքականի ներուժը, ձեր կարծիքով ո՞ր տեղը կարող էր գրավել մեր ընտրանին:**

– Հավաքականի այսօրվա խաղամակարդակով մենք կարող էինք 3-4-րդ տեղերը գրավել, եթե ընթացքում խանգարիչ հանգամանքներ, ցավալի սայթաքումներ չլինեին: Իհարկե, ֆուտբոլասերների կողմից հավաքականից պահանջը մեծ է, սակայն պետք է իրատես լինել, ծանոթ լինել ֆուտբոլային խոհանոցին, տեսնել, թե այսօր մենք ի՞նչ ունենք եւ ի՞նչ կարող ենք անել:

**– Որքան ինձ հայտնի է, հավաքականում աշխատելու ձեր պայմանագրի ժամկետն ավարտվում է: Կցանկանայի՞ք շարունակել աշխատանքը, եթե ձեզ նման հնարավորություն ընձեռվի:**

– Երկու տարվա աշխատանքի ընթացքում ցանված սերմերն արդեն ծիլեր են տվել: Ես կատարել եմ աշխատանքը, գնահատականը պետք է ֆեդերացիան տա: Կցանկանան, որ շարունակեմ աշխատել, մեծ սիրով կմնամ հավաքականում, չեն ցանկանա, թող ոչ ոքի չթվա, թե դրանից աչքերս կլցվեն, Սուքիասյանը որեւէ մեկին կխնդրի, որպեսզի մնա իր պաշտոնում: Ես ողջ կյանքս ծառայել եմ հայկական ֆուտբոլին, այժմ էլ ծառայում եմ եւ դեռ կծառայեմ:

## ՇԱԽՄԱՏ

### Չեմպիոնը կորոշվի Գալոյան-Հլղաթյան մրցամարտում

Շախմատի Հայաստանի կանանց առաջնության վերջին երկու տուրերում հետաքրքիր իրադարձություններ ծավալվեցին: 7-րդ տուրում ուշադրության կենտրոնում էին առաջատարներ Հլղաթյանի եւ Անդրեասյանի մասնակցությամբ հանդիպումները: Անդրեասյանը պարտվեց Գալոյանին, որը վերելքով է հանդես գալիս՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: Իսկ ահա Անդրեասյանի համար դա առաջին անհաջողությունն էր: Հլղաթյանը սեւ խաղաքարերով հաղթեց Աղինյանին, որը 2-րդ անընդմեջ պարտությունը կրելով՝ զգալիորեն նվազեցրեց մրցանակային եռյակ մտնելու իր հնարավորությունները:

Նաիրա Հայրապետյանը 2-րդ տուրն անընդմեջ հաղթանակ տարավ, այս անգամ՝ Անի Դարբինյանի նկատմամբ: Առաջին պարտությունը կրեց նաեւ Նոնա Սահակյանը՝ զիջելով Նարինե Գասպարյանին: Մխիթարյան–Դումանյան պարտիայում հաջողությունն ուղեկցեց սպիտակներին:

8-րդ տուրի բոլոր 5 պարտիաներն էլ արդյունավետ ելք ունեցան: Հլղաթյան–Անդրեսյան պարտիայում հաղթանակ տարան սպիտակները: Իր մարտունակությամբ կրկին առանձնացավ Լիլիթ Գալոյանը՝ տոնելով 5-րդ անընդմեջ հաղթանակը: Լիլիթի հերթական «զոհը» Նոնա Սահակյանն էր: Հինգ խաղ անընդմեջ պարտվելուց հետո արդեն 3-րդ տուրն է, ինչ հաղթում է Նաիրա Հայրապետյանը՝ առավելության հասնելով առաջատարների խմբում գտնվող Նարինե Գասպարյանի նկատմամբ: Վերջապես, հաջողության հասավ Նելլի Աղինյանը՝ պարտության մատնելով Հերմինե Մխիթարյանին, իսկ Դարբինյան–Դումանյան պարտիայում հաղթեցին սպիտակները:

Ավարտական տուրից առաջ 7 միավորով առաջատարը Հլղաթյանն է: Նրանից կես միավոր պակաս է վաստակել Լիլիթ Գալոյանը, որն իր համար նվազագույնն ապահովել է 2-րդ տեղը: Մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Անդրեասյան, Գասպարյան՝ 5-ական, Աղինյան՝ 4,5, Սահակյան՝ 4, Հայրապետյան, Դարբինյան՝ 2-ական, Մխիթարյան, Դումանյան՝ 1,5-ական:

Չեմպիոնի հարցը կվճռվի այսօր կայանալիք վերջին տուրի Գալոյան-Հլղաթյան պարտիայում: Ընդ որում, Հլղաթյանին բավարարում է նույնիսկ ոչ-ոքի արդյունքը:

## ՖՈՒՏԲՈԼ

### «Մանչեստր Յունայթեդի» բյուջեն 129 մլն դոլար է

«Մանչեստր Յունայթեդի» ղեկավարությունը հրապարակել է ակումբի ֆինանսական գործունեության հաշվետվությունը: Անգլիայի չեմպիոնի բյուջեն հասել է ռեկորդային ցուցանիշի՝ 129 մլն դոլարի: Եկամուտների 12 տոկոս աճ է գրանցվել: Ակումբի հիմնական եկամուտը գոյանում է հովանավորների ներդրումներից, ինչպես նաեւ խաղերի ցուցադրման հեռուստահիրավունքի վաճառքից ու գովազդից: Պետք է անտեսել նաեւ մարզադաշտի (67.700 նստատեղ) տոմսերի վաճառքից ստացվող գումարները:

Իհարկե, ֆինանսական կայուն վիճակը շատ բանով նպաստում է թիմի հաջող ելույթներին: Վերջին 8 տարվա ընթացքում «Մանչեստր Յունայթեդը» 6 անգամ նվաճել է Անգլիայի չեմպիոնի տիտղոսը: Դրան նպաստել են լեգեոնականները, որոնց թիմ հրավիրման համար զգալի գումարներ են վատնվում: Այսպես, հոլանդացի Ռուուդ վան Նիստելրոյի, արգենտինացի Խուան Վերոնի, հյուսիսիռլանդացի Ռոյ Քեռոլի եւ էլի մի քանի ֆուտբոլիստների թիմ հրավիրման համար ծախսվել է 46,8 մլն ֆունտ ստեռլինգ: Նախորդ տարվա համեմատ ֆուտբոլիստներին տրվող աշխատավարձի ընդհանուր գումարն աճել է 5,2 մլն ֆունտ ստեռլինգով՝ հասնելով 50 միլիոնի սահմանագծի:

Ակումբի համար լավ հեռանկարներ են բացվում հաջորդ տարվա օգոստոսի 1-ից հանրահայտ «Նայկ» ֆիրմայի հետ համագործակցության պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո: Երկարաժամկետ այդ ծրագիրն ակումբին կբերի 303 մլն ֆունտ ստեռլինգ:

*Բաժինը վարում է*
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Շիրակի» արարքն արժանացավ խիստ գնահատականի

«Ազգը» ֆուտբոլասերներին տեղեկացրել էր, որ սեպտեմբերի 29-ին կայացած «Սպարտակ»–«Շիրակ» հանդիպումը մնացել էր անավարտ. 68-րդ րոպեին ակումբի նախագահ Գառնիկ Խաչատրյանի ցուցումով «Շիրակը» լքել էր խաղադաշտը: Ինչպես տեղեկացրեց կարգապահական կոմիտեի փոխնախագահ Վահան Խրիմյանը, այդ փաստի առիթով ներկայացվել են հանդիպման գլխավոր մրցավար Գեւորգ Հովհաննիսյանի եւ տեսուչ Հովհաննես Աբրահամյանի զեկուցագրերը: Հոկտեմբերի 1-ին կայացել է ՀՖՖ ղեկավար կազմի ժողովը, որն արձանագրել է, որ տեղի է ունեցել անհանդուրժելի, արտառոց արարք, որը հակացուցված է մարզական ազնիվ պայքարի գաղափարին: Դեռեւս օգոստոսի 27-ին «Շիրակ»–«Միկա» հանդիպման ավարտից հետո Գառնիկ Խաչատրյանը հայհոյել էր գլխավոր մրցավար Կարեն Նալբանդյանին, որի համար կարգապահական կոմիտեի սեպտեմբերի 11-ի որոշումով «Շիրակ» ակումբի նախագահը 2 խաղով զրկվել էր պաշտոնական պարտականությունները կատարելու իրավունքից, տուգանվել 100 հազար դրամով: Ըստ պարոն Խրիմյանի, այն ժամանակ մեղմ որոշում էին կայացրել, հաշվի առնելով, որ Խաչատրյանը գործկոմի անդամ է եւ իր արարքի համար ներողություն էր խնդրել ՀՖՖ նախագահից:

Պետք է հիշատակել, որ 1999–2000 թ. ընթացքում անվայել պահվածքի համար Խաչատրյանը հեռացվել էր գործկոմի կազմից եւ կրկին ընտրվել այս տարի:

Կարգապահական կոմիտեի նիստում ընդունվել է հետեւյալ որոշումը.

1. «Շիրակ» ակումբի նախագահ Գառնիկ Խաչատրյանի հրահրմամբ թիմը լքել է խաղադաշտը, եւ խաղն անավարտ է մնացել: Նշանակվել է պատիժ. «Շիրակ» թիմին գրանցվել է պարտություն 0–3 հաշվով, ակումբը տուգանվել է 200 հազար դրամ:
2. Գառնիկ Խաչատրյանին զրկել պաշտոնական պարտականությունների կատարման իրավունքից մինչեւ առաջնության ավարտը եւ անձամբ տուգանել 250 հազար դրամ: Գործկոմին առաջարկել քննարկել իր անդամի վարքագիծը եւ տալ համապատասխան գնահատական:
3. Զգուշացնել «Շիրակ» ակումբի նախագահ Գառնիկ Խաչատրյանին, որ եթե այս տարվա առաջնությունում թույլ տրվի խաղադաշտի լքման կամ խաղին չներկայանալու փաստ, ապա թիմը կզրկվի առաջնությանը մասնակցելու իրավունքից, ֆուտբոլիստները կստանան ազատ խաղացողի կարգավիճակ:

# Դավիթ Նալբանդյանի նորամուտը հաջող էր

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը հաղթանակով նշանավորեց իր նորամուտը թենիսի «Կրեմլի գավաթի» մրցաշարում՝ հաղթելով ֆրանսիացի Դյուպրիին: Հաջորդ փուլում Դավիթին չափազանց լուրջ քննություն է սպասում. նա հանդիպելու է «Կրեմլի գավաթի» քառակի հաղթող Եվգենի Կաֆելնիկովի հետ: Ի դեպ, վերջինս առաջին փուլում կայացած խաղից հետո մամուլի ասուլիսում նշել էր, որ զգուշանում է առաջիկա մրցակցից:

Մրցաշարի հաղթողի հավակնորդներից մեկը՝ Մարատ Սաֆինը 3 խաղափուլում պարտության մատնեց Բելառուսի ներկայացուցիչ Մաքսիմ Միրնուին եւ այժմ մրցելու է իր համար ոչ այնքան հարմար մրցակցի՝ Դոմինիկ Հրբատիի հետ:



Պայքարից դուրս մնաց բուլղարահայ թենիսիստուհի Մագդալենա Մալեեւա-Բերբերյանը, որը զիջեց ռուսաստանցի Անաստասիա Միսկինային (4–6, 6–3, 4–6): Այս մրցաշարում ռուսական թենիսի 2 ներկայացուցիչներն անհաջողության մատնվեցին: Անդրեյ Ստոլյարովը զիջեց Թոմաս Յոհանսոնին, իսկ Ելենա Լիխովցեւան չկարողացավ հաղթահարել ավստրիուհի Բարբարա Շետի դիմադրությունը:

